

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (80)

2018 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.06.2018

Հանձնված է տպագրության

5.09.2018

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (80)
2018 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.06.2018
Подписано к печати 5.09.2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական իրավունք և դատավարություն

Գրիգոր Բեքմեզյան

ՕՐԵՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 5

Վահագն Գրիգորյան

ԳԱՂՏՆԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ, ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 12

Աշխեն Սողոմոնյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ 23

Նաիրա Ավետիսյան

ԱՆՁԻՆ ԱՆԳՐԾՈՒՄԵՆԱԿ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 31

Ռուբինա Պետրոսյան

ԱՐԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՄԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՆ 40

Դավիթ Օհանյան

ԿԱՄՔԸ ԵՎ ԿԱՄԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 54

Քրեական իրավունք և դատավարություն

Սամվել Դիլբանդյան

ԱՆՁԱՓԱՀԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ 63

Արտակ Ղազարյան

«ՄԱՍՆԱԿՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐԻ» ԵՎ ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 73

Геворг Израелян

ПРЕДУПРЕЖДЕНИЕ ПРОСТИТУЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: ПРАВОВЫЕ ОСНОВЫ И ОРГАНИЗАЦИОННЫЕ ПРОБЛЕМЫ 86

Լալա Գրիգորյան

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՏԱՐԻՔԻ ԶՀԱՍԱԾ ԿԱՍ
ԱՆՄԵՂՍՈՒՄԱԿՈՒԹՅԱՆ ԿԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ
ՄԻՋՈՑՈՎ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ 93

Միջազգային իրավունք

Anahit Petrosyan

THE LEGALITY OF MUSLIM BAN AND THE PRINCIPLE OF NON-REFOUOLEMENT
OBLIGATION UNDER PUBLIC INTERNATIONAL LAW 101

Պետության և իրավունքի տեսություն

Արեն Տեր-Բալյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐՈՒՄ.
ՏԵՍԱԿԱՆ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ 108

ՕՐԵՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Բեքմեյան

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Ժամանակակից իրավագիտությունը և հատկապես պրակտիկ իրավաբաններին անհնար է պատկերացնել առանց տնտեսագիտական տարրական գիտելիքների կամ տնտեսական մտածելակերպի: Գործարար հարաբերությունները առօրյալում հանդիպում են ամենուրեք, և դրանց ճիշտ իրավական կարգավորման անհրաժեշտությունը պարտավորեցնում է իրավական լուծումները և իրավական ակտերը ընդունելիս ու կիրառելիս հաշվի առնել տնտեսական պահանջները, ցանկացած իրավական ակտի ազդեցությունը հասարակական հարաբերությունների կարգավորումների վրա քննարկել նաև տնտեսագիտության տեսանկյունից:

Օրենք և տնտեսագիտություն ուղղությունը, ըստ էության լինելով իրավունքի և տնտեսագիտության համագործակցության արդյունքում ձևավորված գիտության նոր և առանձնահատուկ ճյուղ, ներկայումս, ձևավորման փուլից տեղափոխվելով զարգացման փուլ, մեծ տարածում և կարևորություն է ստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների և Եվրոպայի մի շարք առաջնակարգ բուհերում (ինչպես օր.՝ Հարվարդի, Ուտրեխտի, Օքսֆորդի համալսարաններում): Գիտական ուղղությունը օրենքը ենթարկում է տնտեսագիտական վերլուծության, այսինքն՝ որքանով է օրենքը արդյունավետ տնտեսագիտության տեսանկյունից: Նմանատիպ ուսումնասիրության արդյունավետությունը իմաստավորվում է նրանով, որ բացատրվում է իրավական ակտերի և ինստիտուտների ազդեցությունը իրական կյանքում տեղի ունեցող դեպքերի վրա, բացահայտվում են այդ ազդեցության դրական և բացասական կողմերը: Հիմնական խնդիրն այն է, թե օրենքը որքանով կարող է հասկացվել որպես հասարակության զարգացման օգտակար գործողության գործակիցը բարձրացնող մեխանիզմ: Արդյո՞ք օրենսդիրներն ու դատավորները աշխատում են նպաստել տնտեսական արդյունավետության բարձրացմանը՝ առանց գիտակցելու դրա նշանակությունը:

Այս առումով կարևոր է նախ և առաջ բացահայտել, թե ինչով է տարբերվում օրենքի տնտեսագիտական վերլուծությունը օրենքի այլ տիպի վերլուծություններից: Պետք է նշել, որ, չնայած առաջին հայացքից թվացյալ պարզությանը, իրականում տնտեսագիտական վերլուծությունը այլ վերլուծություններից տարբերակելը իրենից որոշակի դժվարություն է ներկայացնում: Մասնավորապես, ըստ Հարվարդի համալսարանի իրավագիտության և տնտեսագիտության պրոֆեսոր Ստիվեն Շավելի, օրենքի տնտեսագիտական վերլուծությունը ունի երեք առանձնահատկություն.

1. տնտեսագիտական վերլուծությունը, ի տարբերություն մյուսների, օգտագործում է մշակված նմուշներ և տեսության ուսումնասիրության վերլուծական ու էմպիրիկ թեսթեր,

2. վերլուծության ընթացքում, նկարագրելով սուբյեկտների վարքագիծը, տնտեսագիտությունը ավելի մեծ դեր ու նշանակություն է տալիս այն մոտեցմանը, որ սուբյեկտները գործում են ավելի ռացիոնալ՝ հետամուտ լինելով իրենց գործողությունների և ընտրության հնարավոր հետևանքներին,

3. նորմատիվային գնահատման ժամանակ տնտեսագիտական վերլուծությունը հաշվի է առնում սոցիալական բարեկեցության չափը, մինչդեռ ուսումնասիրության մյուս մոտեցումները հաճախ սոցիալական բարիքի չափանիշները չեն հստակեցնում կամ հիմնականում թողնում են ենթադրելի¹:

Օրենքի տնտեսագիտական վերլուծության եղանակը մեծապես կարող է կարևորվել և արդիական դառնալ նաև նոր իրավական համակարգ և նոր տնտեսակարգ ձևավորող երկրներում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում:

Հարկ է նշել, որ օրենքի տնտեսագիտական վերլուծությունը, ուսումնասիրելով իրավունքի տարբեր ճյուղերն ու ինստիտուտները, հատկապես մեծ ուշադրություն է դարձնում արտապայմանագրային պարտավորությունների տնտեսագիտական վերլուծությանը: Ուստի կարևորելով հայկական օրենսդրության ներդաշնակման անհրաժեշտությունը արևմտյան իրավական համակարգերին՝ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ նաև օրենքի տնտեսագիտական վերլուծությանը, դրա դրական և բացասական կողմերին, ինչպես նաև հիմնավորել դրա անհրաժեշտությունը ՀՀ իրավական համակարգի արդյունավետ ձևավորման տեսանկյունից: Ինչպես նշում է Գ. Կալաբրեզին, տնտեսագիտական վերլուծության նպատակը ոչ թե փոխհատուցման որոշակի համակարգի թելադրումն է, այլ կոնկրետ հարցերի ճշտումը, որոնք մենք պետք է կատարենք որոշելու, թե հատուցման որ համակարգն է ավելի գերադասելի²:

Արտապայմանագրային պարտավորությունների տնտեսագիտական վերլուծությունը նպատակահարմար է սկսել Ռոնալդ Հ. Քոուզի «Հասարակական արժեքի խնդիրը» (“The Problem of Social Cost”) հոդվածի քննարկմամբ, որը հիմնարար դեր ունի օրենքի նշանակությունը տնտեսագիտության տեսանկյունից ուսումնասիրող հետագա աշխատությունների համար: Քոուզի վերոնշյալ հոդվածը ոչ միայն օրենքի տնտեսագիտական քննարկման խնդրի ձևավորման և դրա անհրաժեշտության հիմնավորման հիմք հանդիսացավ, այլև նպաստեց նրան տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակ շնորհելուն³:

Քոուզի հոդվածի կարևորությունը քննարկման ներկայացվող նյութի տեսանկյունից այն է, որ նախ և առաջ, ըստ հեղինակի, և՛ վնաս պատճառողը, և՛ տուժողը նպաստում են վնասի ծավալի ձևավորմանը: Մինչև Քոուզի հոդվածը վնաս պատճառվելու դեպքում վնասի հատուցման պարտականությունը թե՛ տեսության մեջ և թե՛ պրակտիկայում դրվում էր վնասը պատճառողի վրա, և վնասի կանխարգելման դեմ գործողությունները հիմնականում նպատակաուղղված էին վնաս պատճառողի վարքագիծը կանոնակարգելուն: Ի հակադրություն սրան՝ Քոուզը իր հոդվածում առաջ քաշեց տուժողի վարքագիծը կանոնակարգելու անհրաժեշտությունը: Օրինակ, միմյանց անմիջական հարևանությամբ բնակվող և ձեռնարկատիրությամբ զբաղվող երկու սուբյեկտների միջև, որոնցից մեկը զբաղվում է ցորենի աճեցմամբ, իսկ մյուսը՝ անասնաբուծությամբ, առաջանում է խնդիր⁴. մասնավորապես՝ ֆերմերի անա-

¹ Տե՛ս **Steven Shavell** Economic Analysis of Accident law, John M. Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002, էջ 3:

² Տե՛ս **Calabresi, G.**, The Costs of Accidents: A Legal and Economic Analyses. New Haven, Yale University Press (1970), էջ 312-313:

³ Տե՛ս **Donald A. Wittman (ed.)**, *Economic Analysis of the Law*, Blackwell Publishing, 2003, էջ 3:

⁴ Օրինակը վերցված է Քոուզի նշված հոդվածից Տե՛ս **Ronald H. Coase**, The problem of social cost, *Journal of Law and Economics*, 1960: Սակայն մենք այս օրինակը որոշ փոփոխությունների ենք ենթարկել՝ պայմանավորված մեր կողմից արծարծվող խնդիրների առանձնահատկություններով:

սունները շատանալով սկսում են մտնել հողագործի ցորենի դաշտը և վնաս են պատճառում վերջինիս: Ինչպե՞ս լուծել խնդիրը: Իհարկե, գործող օրենսդրության տեսանկյունից ակնհայտ է, որ հողագործը իրավունք կունենա ֆերմերից վնասների հատուցում ստանալու և իր սեփականությունը պաշտպանելու, որը կարող է տեղի ունենալ մի քանի տարբերակով՝ իրական վնասը հատուցելով, արգելելով անասունների մուտքը հողագործի տարածք և այլն: Սակայն արդյո՞ք տնտեսագիտության տեսանկյունից սա նպատակահարմար է: Այսինքն՝ արդյո՞ք ֆերմերի վրա վնասի հատուցման պարտականություն դնելը տնտեսապես ավելի նպատակահարմար է, քան տվյալ դեպքում վերջինիս պատասխանատվությունից ազատելը: Ո՞րն է ավելի օգտակար և ցանկալի հասարակության համար՝ ցորե՞նը, թե՞ կենդանիները, գետի մեջ թունավոր նյութեր թափող գործարանի արտադրա՞նքը, թե՞ գետի ձուկը: Ահա այս հարցերի պատասխանը գտնելու նպատակով Ռ. Հ. Քուուզը իր հոդվածում փորձ է կատարում պարզ հաշվարկների միջոցով ապացուցել, որ հնարավոր են դեպքեր, երբ, վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատելով, հասարակությունը տնտեսապես ավելի շահի, քան հակառակ դեպքում¹: Քուուզի տեսության հաջորդ նշանակությունը ըստ Ուիտմանի այն է, որ ցույց տվեց՝ մասնավոր շուկան կարող է ինքնուրույն լուծել խնդիրներ, որոնք տնտեսագետների համոզմամբ ենթակա էին միայն իշխանությունների հայեցողությանը²: Այսինքն, եթե շուկայի մասնակիցների համար օրենսդիրը հնարավորություն է ստեղծում լուծելու միմյանց միջև ծագած խնդիրները բանակցությունների միջոցով, ընդ որում, եթե դրանց ծախսը ավելի նվազ է, քան սպասվող արդյունքը, ապա կողմերը անպայման կդիմեն բանակցությունների և այդ ձևնապարհով նվազագույն ծախսերով կհասնեն ցանկալի արդյունքի: Մեր կարծիքով, Քուուզի հոդվածի ամենաէական արժեքը, որը և հիմք հանդիսացավ «Քուուզի տեսության» ձևավորման, այն է, որ հոդվածում հեղինակը հանգում է հետևյալ եզրակացության. պայմանագրային ծախսերի (պայմանագրերի կնքում և վերահսկողություն) բացակայության դեպքում վնասի ծավալը կմնա նույնը՝ անկախ այն բանից՝ հողագործը ունի վնասի հատուցման իրավունք, թե ֆերմերը՝ վնաս պատճառելու:

Քուուզի տեսությունը ժամանակի ընթացքում ենթարկվել է քննադատության³, որին մենք այժմ չենք անդրադառնա, քանզի մեր նպատակը ոչ թե դրա քննադատությունն է կամ գովաբանությունը, այլ խնդրի, այսինքն՝ օրենքի տնտեսագիտական վերլուծության անհրաժեշտության բացահայտումը:

Ուսումնասիրելով օրենքի տնտեսագիտական վերլուծության վերաբերյալ արևմտյան գրականության մեջ հատկապես տնտեսագետ մասնագետների արտահայտած տեսակետները՝ կարող է թվալ, թե օրենքի տնտեսագիտական վերլուծությունը հիմնականում ընթանում է տնտեսական շահի ուղղությամբ՝ անուշադրության մատնելով օրենսդրության հիմնական սկզբունքները՝ արդարություն, ազնվություն, բարոյականություն, կողմերի հավասարություն և այլն: Աշնուշտ, այդ կարծիքի մեջ առկա է որոշակի ճշմարտություն, ուստի մեր ուսումնասիրության նպատակը ոչ թե օրենքի տնտեսագիտական վերլուծության գովաբանությունն է, այլ դրա՝ իրավաբանության տեսանկյունից ընդունելի կողմերով արդյունավետ իրավական համակարգի ստեղծումը, որը կարելի է ցույց տալ Շավելի աղյուսակի հիման

¹ St' u **Ronald H. Coase** The problem of social cost, *Journal of Law and Economics*, 1960:

² St' u **Donald A. Wittman (ed.)**, նշված աշխատությունը, էջ 3:

³ St' u **Robert Cooter** The Coast of Coase, **Donald A. Wittman (ed.)**, *Economic Analysis of the Law*, Blackwell Publishing, 2003, էջ 14:

վրա:

Նպատակ ունենալով ցույց տալ ծախսերի բաշխման և սոցիալական բարեկեցության լավագույն հնարավոր աստիճանը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում՝ հեղինակը աղյուսակի միջոցով փորձ է անում ըստ կողմերի զգուշավորության աստիճանի վերլուծել պատահարների քանակի կանխման և ծախսերի հնարավոր արդյունավետ բաշխման հնարավորությունը: Մենք, մեր հերթին, նպատակ ունենալով ցույց տալ, թե ինչպես օրենքի տնտեսագիտական վերլուծությունը կարելի է արդյունավետ կիրառել նաև օրենսդրության կատարելագործման առումով, Շավելի օրինակը կօգտագործենք այդ տեսանկյունից:

Այսպես՝ 100 պ.մ. ծախսեր ենթադրող ճանապարհատրանսպորտային պատահարի հնարավորությունը կախված է վնաս պատճառողի և տուժողի զգուշավորության աստիճանից, որը ցույց է տրվում ստորև բերվող աղյուսակում.

Աղյուսակ 1. *Տուժողների և վնաս պատճառողների ուշադրության աստիճանը և պատահարի հնարավորությունը*

| Վնաս պատճառողի ուշադրություն | Տուժողի ուշադրություն | Վնաս պատճառողի ուշադրության ծախսեր | Տուժողի ուշադրության ծախսեր | Պատահարի հնարավորություն | Սպասվելիք ծախսեր | Ընդհանուր սոցիալական ծախս |
|------------------------------|-----------------------|------------------------------------|-----------------------------|--------------------------|------------------|---------------------------|
| բացակայում է | բացակայում է | 0 | 0 | 15% | 15 | 15 |
| բացակայում է | կա | 0 | 2 | 12% | 12 | 14 |
| կա | բացակայում է | 3 | 0 | 10% | 10 | 13 |
| կա | կա | 3 | 2 | 6% | 6 | 11 |

Ինչպես եզրակացնում է հեղինակը, աղյուսակի վերջին տողից և սյունակից ակնհայտ է, որ սոցիալապես լավագույն տարբերակին կարելի է հասնել այն դեպքում, երբ և՛ վնաս պատճառողը, և՛ տուժողը ձեռնարկում են միջոցներ վնասից խուսափելու համար¹: Եվ իրոք, երբ միայն տուժողը կամ վնաս պատճառողն են միջոցներ ձեռնարկում վնասից խուսափելու համար, ապա մեծ են լինում և՛ սոցիալական ծախսերը, և՛ վնասի հավանականությունը: Այսպիսով, օրենքի տնտեսագիտական վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս հասկանալու օրենսդրությունը նաև տնտեսության տեսանկյունից և օրենսդրության բարեփոխման միջոցով հասնել ավելի արդյունավետ սոցիալական բարեկեցության:

Իսկ ինչպես նշում են Մարկեզինիսն ու Ղեակինը, օրենքի տնտեսագիտական վերլուծության նպատակն է ապահովել ծախսերի արդյունավետ բաշխումը արտապայմանագրային պարտավորությունների մասնակիցների միջև, այսինքն՝ ձևավորել այնպիսի օրենսդրական համակարգ, որի դեպքում ծախսերի որոշակի բաժինը կրնկնի այն անձի վրա, որը ավելի շատ հնարավորություն և միջոցներ ունի կրելու դրանք²:

¹ Տե՛ս **Steven Shavell**, *Economic Analysis of Accident law*, նշված աշխատությունը, էջ 5:

² Տե՛ս **B.S. Markesinis and S.F. Deakin**, *Tort Law*, նշված աշխատությունը, էջ 25-35:

Այսպիսով, ակնհայտ է, որ քննարկվող խնդրի նպատակն է նաև ուսումնասիրել ծախսերի առավել արդյունավետ բաշխումը կողմերի միջև և նպաստել դրանց բարելավմանը:

Գտնում ենք, որ օրենսդրության նպատակը ոչ միայն սեփականության կամ կյանքի և առողջության պաշտպանությունն է, այլև այնպիսի համակարգի ստեղծումը, որը հնարավորություն կընձեռի նվազեցնելու այդ արժեքների նկատմամբ ունեցողությունները, արդյունավետ բաշխելու ծախսերը կողմերի միջև: Ասվածը կարող ենք հիմնավորել շատ պարզ օրինակի հիման վրա: Գաղտնիք չէ, որ առօրյա կյանքում ճանապարհատրանսպորտային պատահարները շատ դեպքերում տեղի են ունենում այն պատճառով, որ հետիոտները, արհամարհելով կանոնները, փողոցը հատում են ցանկացած տեղից՝ առանց նույնիսկ օգտագործելու դրա համար նախատեսված անցումները: Սա արդյունք է մոտալուտ վտանգի նկատմամբ հետիոտնի անփութության և, ինչպես նշեցինք, վստահության, որ, միևնույն է, վնաս պատճառողը կհատուցի դա, իսկ արդյունքում՝ վնաս և լրացուցիչ ծախսեր: Արդյո՞ք մենք կունենանք նույն վիճակը, եթե օրենսդրորեն ամրագրվի, որ փողոցն անցնելու կանոնները խախտած տուժողի կրած վնասը ենթակա չէ հատուցման:

Ընդհանրապես, հարկ ենք համարում նշել, որ արևմտյան իրավատեսասագիտական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվում օրենքի տնտեսագիտական վերլուծությանը հենց վնաս պատճառելու հարաբերությունները կարգավորող օրենսդրության դեպքում¹, սակայն անուշադրության չեն մատնված նաև պայմանագրային իրավունքի, արտոնագրային և հեղինակային իրավունքների, քրեական իրավունքի ուսումնասիրումը տնտեսագիտության տեսանկյունից: Հատկապես առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում դատավարության և դատական ծախսերի բաշխման տնտեսագիտական վերլուծությունը: Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան <<-ում, շատ դեպքերում կողմերը դիմում են դատական պաշտպանության՝ ամենևին հաշվի չառնելով դատական ծախսերը (երբ հնարավոր է, որ 100 պ.մ. շահելու նպատակով կողմը դատարանում ծախսի 200 պ.մ): Իսկ դատավարության և իրավական գործընթացների տնտեսագիտական վերլուծությունը հնարավորություն է տալիս իրավաբաններին ավելի ճիշտ կողմնորոշվելու և ավելի նպատակային գնահատելու, թե որ դեպքում կողմերը կդիմեն դատավարության, կամ որ դեպքում է նպատակահարմար վեճը լուծել բանակցությունների միջոցով: Սա հատկապես կարևորվում է վնաս պատճառելուց բխող պարտավորությունների դեպքում պատճառված վնասի հատուցման գործերի ժամանակ, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային և << պրակտիկան, այս պարտավորությունների կողմերը գերակշռող դեպքում ձգտում են վեճը լուծել բանակցությունների միջոցով, իսկ օրենքի տնտեսագիտական վերլուծությունը հնարավորություն կտա ավելի իրատեսորեն գնահատել կողմերի շանսերը և հնարավորությունները, ճիշտ կազմակերպել բանակցությունները:

Այսպիսով, օրենքի տնտեսագիտական վերլուծության նպատակն է բացահայտել, թե ինչպիսին է օրենքի դերը տնտեսության տեսանկյունից. արդյո՞ք հնարավոր չէ մինչև օրենքի ընդունումը քննարկել վերջինիս տնտեսական նշանակությունը և ցանկալի տնտեսական արդյունքի հասնելու համար ավելի արդյունավետ

¹ Տե՛ս **Steven Shavell**, *Economic Analysis of Accident law*, **John M.** Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002:

բաշխել օրենքի կիրառման ժամանակ առաջացող ծախսերը, տնտեսության տեսանկյունից քննարկել քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների գործողությունների դրդապատճառները և դրանց հիման վրա ընդունել ավելի արդյունավետ օրենքներ:

LAW AND ECONOMICS

Grigor Bekmezyan

*Associate Professor at the YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences*

The author discusses combination of law and economics as a comparably new subject and course in the field of jurisprudence and economics. Started its development from 70's, nowadays the subject has its big role and importance for legal and economic studies in the developed countries.

In the era of economic relationships every lawyer specializing in the business and economic law, must understand and know economics. It is very important for every lawyer to have not only legal but also economic thinking. This course gives lawyers abilities to understand and analyze law and legal acts also from economical point of view.

The article is analyzing the law in the aspect of economics; that is "What are the effectiveness of law from the aspect of economics". In the article, the basic approaches of different types of economic analysis of law are introduced and the basic theories and tools are explained. Effect analyses describe the real-life effects of legal rules and institutions; reveal unexpected side effects or even adverse effects of legal rules. Explanatory economic analyses are focused on providing an economic explanation for existing rules and institutions.

The purpose of the article is to introduce to lawyers and economists of Armenia the entity of Law and Economics and put into discussion the necessity of the subject in Armenia.

ЗАКОН И ЭКОНОМИКА

Григор Бекмезян

*Доцент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук*

Автор обсуждает сочетание права и экономики, как сравнительно новое направление и предмет в сфере юриспруденции и экономики. Начиная свое развитие в 70-х годах, сегодня предмет имеет свою большую роль и значение в правовых и экономических исследованиях в развитых странах.

В век экономических отношений каждый юрист, специализирующийся в бизнес и экономическом праве, должен понимать и знать экономику. Для каждого юриста очень важны экономические знания. Исследуемое направление дает возможность юристам понимать и анализировать законы и другие акты также с точки зрения экономики.

Статья анализирует закон с точки зрения экономики: какова эффективность закона с точки зрения экономики? В статье представляются основные подходы разных видов экономических анализов закона и объясняются основные теории. Анализ эффектов анализирует реальный эффект правовых актов и институтов на реальную жизнь, раскрывают скрытые, в том числе и негативные, эффекты правовых актов. Объяснительный экономический анализ сфокусирован на экономическом объяснении существующих законов и институтов.

Цель статьи представить на обсуждение юристов и экономистов Армении сущность и нужность направления “Закон и Экономика”.

Բանալի բառեր – *Օրենք, տնտեսագիտություն, վնաս, հատուցում, կարգավորում*

Ключевые слова – *Закон, экономика, вред, компенсация, регулирование*

Key words – *Law, economics, damage, compensation, regulation*